Հաստատում եմ՝ 18.09. 2023թ.

Դպրոցի տնօրեն՝ / Ա. Թորոսյան/

ՀՀ ԿԳՄՍՆ «Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգողի

տարեկան աշխատանքային պլան

Դաստիարակչական աշխատանքների համակարգող՝

Վարվառա Ռազմիկի Օսիպյան

2023 – 2024 ուստարի

VI. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

1. Պաշտոնային պարտականությունները՝

1) կազմակերպում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները, այդ ուղղությամբ համագործակցում դասղեկների հետ.

2) մասնակցում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապի և համագործակցության ապահովմանը.

3) տնօրենի դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալի ղեկավարությամբ կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար.

4) սովորողների մեջ ձևավորում է պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, նպաստում նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, դաստիարակում մարդասիրություն և հայրենասիրություն.

5) ուսումնական հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն է ցույց տալիս դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար.

6) աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը.

7) մասնակցում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի, սովորողների առաջադիմության և վարքի ընթացիկ վերահսկմանը.

8) կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստում հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը.

9) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը.

10) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

11) համագործակցում է ծնողների հետ՝ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

2. Հանրակրթական ուումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները,

գ. աշխատանքի պաշտպանության նորմերն ու կանոնները, անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության կանոնները, մինչբժշկական օգնության հիմունքները, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները.

2) տվյալ պաշտոնն զբաղեցնողի կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները ներկայացված են սույն բաժնի 1-ին մասում:

3. Որակավորման պահանջները՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կամ միջին մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ:

Պլանավորման և ծրագրավորման գործառույթ

1. Աշխատանքի պլանավորումն օգնություն է հենց իրեն՝ պլանավորումին:
2. Սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը ծրագրավորում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական,արտադպրոցական աշխատանքները, այդ ուղղությամբ համագործակցումդասղեկների հետ
   - Մասնակցում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապի և համագործակցության ապահովմանը
   - Մանկապատանեկան կոլեկտիվի կենսագործունեության
     - Ուսումնական,
     - Կարգապահական
     - Ճանաչողական
     - Աշխատանքային
     - Գեղագիտական
     - Առաջնորդության դրսևորման
     - Միջոցառումների կազմակերպման
     - Նիստերի, ժողովների անցկացման
     - Ազատ փոխհարաբերվելու կկարողությունների զարգացման
     - Այլ գործառույթներ
3. Պլանավորում է դասղեկների հետ համագործակցելու միջոցներն ու մեխանիզմները
4. Ծրագրում է աշակերտական ինքնավարության կանոնադրության ողջ գործառույթը(կանոնադրության մասսայականացում, հանձնախմբերի ձևավորում, դասարանական ընտրություններ, համադպրոցական ընտրություններ, հաշվետու կոնֆերանս, ժողովներ):
5. Տնօրենության հետ համատեղ(հանձնարարությամբ, հրահանգով) նպաստում էդպրոցի կենսագործունեության պլանի իրականացմանը :

Կազմակերպչական գործառույթ

1. Կանոնակարգում է պլանավորված աշխատանքը
2. Ձևավորում է նախաձեռնող խմբեր տարբեր տարիքի սաներից
3. Խթանում է ցանկացած նպաստավոր նախաձեռնություն
4. Հանդուրժողականության, համագործակցության մեխանիզմներով ներգրավում ծրագրերի իրականացմանը(աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին, համայնքի տարբեր գործունեության ներկայացուցիչներին):
5. Աշակերտական խորհրդի աշխատասենյակը ձևավորում է հնարավորինս հաճելիորեն ժամանակակից և տրամադրող, այն ծառայեցնում սաների ազատ ժամանցին, ուսումնադաստիարակչական լրացուցիչ գործառույթներին:
6. Սաներին ներգրավում սենյակի ձևավորմանը և ներքին կանաչապատմանը:
7. Ընտրում է աշխատանքների կազմակերպման եղանակները՝ ելնելով արդյունավետության աստիճանից
8. Որոշակի չափանիշներով գնահատում է մոտեցումները տվյալ գործառույթի նկատմամբ(դասարանախմբերի, ծնողների, տնօրենության, սպասարկող անձնակազմի և այլ):

Լրացուցիչ դաստիարակության գործառույթ

1. Դաստիարակչական աշխատանքն իրականացվում է՝ ելնելով դպրոցիընդհանուր դաստիարակչական խնդիրներից՝
   Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենքի շրջանակում:
2. Դաստիարակության քաղաքականուիթյունը ենթադրվում է հանրակրթության պետական կրթակարգի հիմնական դրույթներից
3. Կրթության կազմակերպման ընդհանուր սկզբունքները և կյանքին հարաբերվելու հմտությունները հանդիսանում են դաստիարակությանիրականացման ուղենիշեր:
4. Ժողովրդավար հասարակության, քաղաքացու ձևավորման գործում խտացվում է ետդասյա գործունեության շրջանակները(ինքնակառավարում, գեղագիտական, ռազմամարզական միջոցառումներ, շփումներ, հասարակական գիտությունների զբաղվողների հետ, ՏՀՏ հմտություններ)

5. Կազմակերպչի մանկավարժական գործունեությունից ամենառաջնայինը համարելով դաստիարակչականը՝ իրականացնում է դասղեկների միավորելու խնդիրը՝ ջանքերի համատեղումը ուղղորդելով հիմնախնդիրների իրականացմանը:
6. Աշակերտական ինքնավարությանը ցուցաբերում մանկավարժական աջակցություն:
   - Հանձնախմբերի ձևավորում
   - Կանոնադրական կարգի ծանոթացում, ընտրական կարգի ապահովում
   - Աշակերտական ամենամյա կոնֆերանսի անցկացում
   - ԱԽ նախագահի(տեղակալի) խորհդակցական ձայնի իրավունքով, դպրոցական խորհրդին, մանկավարժական խորհրդին , ծնողականխորհրդին մասնակցության ապահովում
7. Օրացուցային տոներին (և ընթացիկ տոնակատարություններին) ակտիվության ապահովում

   Քաղաքի օրվա տոնակատարությունների շրջանակում
   - Ներկայացումների դիտում /ՏՀՏ/
   - Համերգների ունկնդրում
   - Հանդիսությունների մասնակցություն / հեռավար/
   - Տեղեկատվության ապահովում(քաղաքի պատմության) /համացանցով/
8. Միջոցառումների բովանդակային փոփոխություններով պայմանավորել աշակերտի՝ քաղաքացու, անձի սոցիալական նոր որակի ձևավորում:
9. Աշակերտական խորհրդի սենյակի գործունեությունը ծառայեցնել ուսումնադաստիարակչական գործընթացի խթանմանը:
10. Դպրոցական առօրյայի կարգապահական մակարդակի բարձրացման նպատակով աշակերտական հերթապահության ինքնավերահսկողությանակտիվացում.
    - Ուշացումների գրանցում, քննարկում
    - Դպրոցական կանոնավոր կեցվածքի խրախուսում
    - Այլ (օր, սովորողի դաստիարակվածության ելակետային մակարդակի վերահսկում):

11. Գեղագիտական միջոցառումների շրջանակի ընդլայնումով նպաստել դեռահասներին սոցիալական անբարենպաստ միջավայրի ազդեցությունից առավելագույնս զերծ պահելուն:
12. Էքսկուրսիաների և տեղակատվության միջոցով իրազեկել քաղաքի մշակութային օջախներին, նշանավոր մարդկանց և նշանավոր գործերին:
13. Դասղեկների հետ հանդիպումներում քննարկումների նյութ դարձնել դպրոցական առօրյայից խուսափող երեխաների հարցը:
14. Ծնողներին հնարավորինս ներգրավել ետդասյա աշխատանքերում:

Համագործակցային գործառույթ

1. Համագործակցային հարաբերությունները կնպաստեն անձի ինքնաբացահայտմանը, զարգացման կարողությունների ճանաչմանը
   - Ամենօրյա շփումներում սաների հետ
   - Միջոցառումների պլանավորման ու ծրագրերի իրագործման ընթացքում
   - Էքսկուրսիաների ժամանակ
   - Արտադպրոցական-արտադասարանական աշխատանքներում
2. Շարունակել համագործակցությունը այլ դպրոցների աշակերտական խորհուրդների, դասարանախմբերի, ուսուցչական կոլեկտիվների հետ.
   - Մասնակից դարձնել համաժողովներին
   - Կազմակերպել մրցույթ-վիկտորինաներ, էքսկուրսիաներ...
3. Նախահարձակ լինել արտասահմանյան կազմակերպությունների հետ համագործակցությանը, օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները ևս:

Երեխայի սոցիալական պաշտպանության գործառույթ

Սոցիալական պաշտպանությունը հոգեբանամանկավարժական միջոցների ամբողջություն է, որոնք երաշխավորում են երեխայի անհատականության ձևավորումը, հարմարեցումը, գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական պայմաններին, որի համար

- «Ռիսկային գոտու» երեխաներին առավելագույնս ներգրավել արտադասարանական-արտադպրոցական գործընթացին.
- Կազմակերպել այցելություններ դժվար իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքներին.
- Ճշգրիտ վերլուծություններով կանխել սուր իրավիճակները.
- Ուղղորդել, որպեսզի երեխան կարողանա խուսափել աննպաստ սոցիալական միջավայրից՝ (հաշվի առնելով նրա ելակետային դաստիարակության աստիճանը),
- Ցուցանել մեխանիզմներ կարճ ժամանակահատվածում կողմնորոշվելու և սուր իրավիճակից դուրս գալու համար /հակաճգնաժամային հոգեվերլուծություններ/

Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ

1. Աշակերտական ինքնակառավարությունը գործելով կանոնադրական պահանջների շրջանակում իրականացնել կամավորության սկզբունքով:
2. Նպաստել դասարանական խորհուրդների թափանցիկ ձևավորմանը:
3. Կազմակերպել ֆորումներ, մտքերի տեսակետների, սկզբունքների դրսևորման հրապարակներ՝ աշակերտի ինքնադրսևորման և ինքնահաստատման նպատակով:
4. Ավանդույթի ուժով պահպանել ինքնավարի օր գործառույթը:
5. Փորձել անցկացնել դպրոցական ինքնավարության ատեստացիա:
6. Ձեռք բերել պայմանավորվածություն ինքնավարների, ավագների և ԱԽ նախագահների տնօրենության, համայնքի, ղեկավարի, ավագանու հետ հանդիպման:
7. Օժանդակել աշակերտական փոքր ու մեծ նախաձեռնությունները:

ՀՀ	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու անձ	Կատարման ժամկետը
❖	Դպրության տոնի և ուսուցիչների երդման արարողության պատշաճ կազմակերպում	Օսիպյան Դասղեկներ	Սեպտեմբեր
❖	Քաղաքի օրվան նվիրված հայրենասիրական ակցիաների նախաձեռնում	Օսիպյան Դասղեկներ	
❖	Անկախության տոնին ընդառաջ ամրապնդել ավանդույթը՝ <<Պետականության դաս>>	Օսիպյան Դասղեկներ	
❖	Լավագույնս արձագանքել համաքաղաքային, մարզային, և հանրապետական բոլոր առաջադրվածծրագրերին. • Հակահամաճարակային • Արտակարգ իրավիճակների	Օսիպյան Դասղեկներ	Տարվա ընթացքում
❖	Բոլոր դասարաններում անցկացնել ավագների, մատենավարների, ինքնավարների, աշակերտական խորհրդի նախագահների ընտրություններ:	Օսիպյան Դասղեկներ	Սեպտեմբեր
❖	Դասարաններին ծանոթացնել ԱԽ-ի կանոնադրությանը և ներգրավել հանձնախմբերի աշխատանքներում:	Օսիպյան Դասղեկներ	Սեպտեմբեր
❖	Ժամանակին կազմակերպել ԱԽ ֆորում, նախընտրական գործընթաց ու համադպրոցական ԱԽ նախագահի ընտրություններ:	Օսիպյան Դասղեկներ	Սեպտեմբեր

❖	Աշակերտական հերթապահության կազմակերպում, անցկացում	Օսիպյան Դասղեկներ	Տարվա ընթացքում
❖	Ճանաչողական, համադպրոցական հեռավոր էկուրսիաների կազմակերպում	Օսիպյան Դասղեկներ	Տարվա ընթացքում
❖	Համագործակցային աշխատանք անապահով ընտանիքների հետ.	Օսիպյան Ծրագրի մասնակիցներ	Տարվա ընթացքում
❖	Համագործակցային աշխատանք հասարակական կազմակերպությունների հետ	Օսիպյան Ծրագրի մասնակիցներ	Տարվա ընթացքում
❖	Օրացուցային տոն օրերին/ հատկապես պետական նշանակություն ունեցող/ հեռավար գեղագիտական միջոցառումներ	Օսիպյան Դասղեկներ	Սեպտեմբեր
❖	«Հայրենիքը լեզու է, նա միացնում է անցյալը, ներկան և ապագան»կարգախոսին համահունչ կազմակերպել քննարկումներ, որոնց նպատակը լինի երեխաների կողմից ընկալված լինելը: :	Օսիպյան Դասղեկներ	Տարվա ընթացքում

❖	Պարբերաբար կրտսեր, ավագ դպրոցի սաներին ծանոթացնել Արցախի զոյամարտի տարեգրությանը, պատմությանը նառհասարակ դրանց հետ կապվածէլեկտրոնային էջերին:	Օսիպյան Դասղեկներ Զինղեկ՝ Հ.Մոսինյան	Տարվա ընթացքում
❖	«Ով մոռանում է անցյալը՝ նա դատապարտված է...» այցելություններ հուշահամալիր, վետերանների խորհուրդ, զոհվածների կոմիտե, զորամասեր:	Օսիպյան Զինղեկ Դասղեկներ	Տարվա ընթացքում
❖	Մասնակցել համաքաղաքային և եկեղեցական բոլոր տոնակատարություններին, դասղեկներին, ներգրավել դրանցում, աշակերտներին իրազեկել ժամանակի առօրյային:	Օսիպյան Դասղեկներ	Տարվա ընթացքում
❖	«Բնությունը անսպառ չէ...» Անցկացնել դպրոցի ներքին և արտաքին կանաչապատման ակցիա/միջին դասարանախմբերի հետ/ բնույթը՝ մրցութային:	Օսիպյան Կենսաբանության ուսուցիչ Դասղեկներ	Գարնանը
❖	Վարք, վարվելակերպ, ամեն տեղ, ամենուր / այն ձևավորվում է ընտանիքում, դպրոցում, հասարակության մեջ և ուղեկցում մարդուն ամբողջ կյանքում/ • Համացանցային այցելություն թանգարաններ,պատկերասրահներ, թատրոններ,	Օսիպյան Վ. Դասղեկներ	Տարվա ընթացքում

ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ

Օրեր	Բովանդակություն	Ամիս
1-2	Ամանորի տոնական օրեր	Հունվար
6	Ծնունդ Հայտնության Հիսուս Քրիստոսի	
8	ՄԱԿ-ի թղթակիցների ասոցիացիայի հիմնադրման օր /1948/,Դոնորի օր	
28	Հայոց բանակի հիմնադրման օր	
5	Մարդու իրավունքների կոնվենցիայի վավերացման օր	Փետրվար
10	Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի օր	
13	Տեառն ընդառաջ	
14	Սիրահարների օր	
21	Մայրենի լեզվի միջազգային օր	
28	Բաքվի ջարդերի զոհերի հիշատակի նբոնազաղթած հայրենակչության իրավունքների պաշտպանության օր	
8	Կանանց իրավունքների և միջազգային խաղաղաության օր	Մարտ
21	Ռասասյական խտրականության դեմ պայքարի համերաշխության օր	
22	Ջրային ռեսուրսների պաշտպանության համաշխարհային օր	
23	Օթերևութաբանի օր	
27	Թատրոնի միջազգային օր	
1	Կատակների և սրամտությունների օր	Ապրիլ
	Երկրաբանի օր	
2	Մանկական գրքի միջազգային օր	
3	Միջազգային դատարանի առաջին նիստի գումարումըՀաագայում /1946/	
4	Սուրբ Զատիկ	
7	Մայրության և գեղեցկության օր	
8	Գնչուների համաշխարհային օր	
12	Ավիացիայի և տիեզերագնացության համաշխարհային օր	
16	Ոստիկանության օր	
18	Հուշարձանների և պատմական վայրերի համերաշխության օր	
19	Գիրք նվիրելու օր և Ամենայն հայոց բանաստեղծ Հ.Թումանյանի ծննդյան օր	
24	Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր	

26	Սահմանապահի օր	
28	Աշխատանքի անվտանգության պաշտպանության համաշխարհային օր	
1	Աշխատավորների միջազգային համերաշխության օր/ նշվումէ 1889թ.ից/	Մայիս
3	Մամուլի ազատության համաշխարհային օր	
7	Ռադիոյի, հեռուստատեսության ու կապի աշխատողների մասնագիտական օր	
8	ՀՀ-ում երկրապահի օր, Կարմիր խաչի և կարմիր մահիկի համաշխարհային օր	
9	Հաղթանակի և խաղաղաության տոն, Ծուծիի ազատագրության օր	
15	Ընտանիքի միջազգային օր	
28	Հայաստանի Հանրապետության օր	
31	Ծխելու դեմ պայքարի համաշխարհային օր	
1	Երեխաների պաշտպանության միջազգային օր	Հունիս
5	Բնապահպանի օր	
14	Բոնադատվածների հիշատակի օր	
21	Բուժաշխատողի օր	
26	Թմրանյութերի չարաշահման և ապօրինի շրջանառությանդեմ պայքարի միջազգային օր	
29	Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օր	
30	Հողաշինարարի և գեոդեզիստի օր	
1	Դատախազության աշխատողի օր	Հուլիս
5	Սահմանադրության օր	
12	Երիտասարդության միջազգային օր	
13	Ձախլիկների միջազգային օր	Օգոստոս
17	Կապան քաղաքի օր	
1	Գիտելիքի, գրի և դպրության օր	Սեպտեմբեր
2	Արցախի հանրապետության հռչակման օր	
4	ԱԻՆ աշխատակցի օր	
16	Օզոնային շերտի պահպանման միջազգային օր	
18	Աստղագիտության օր	
21	Հայաստանի Հանրապետության անկախության օր	
25	Օվկիանոսի միջազգային օր	
30	Քաղաքացիական ավիացիայի օր	

1	Տարեցների միջազգային օր , երաժշտության միջազգային օր	Հոկտեմբեր
4	Կենդանիների պաշտպանության համաշխարհային օր	
5	Ուսուցչի մասնագիտական տոն	
6	Երևանի օր	
7	Գրադարանավարի միջազգային օր	
9	Փոստի միջազգային օր	
	Թարգմանչաց տոն	
12	Ծխախոտի դեմպայքարի ազգային օր	
16	Հայ մամուլի օր	
27	1999թ. Նահատակների հիշատակի օր	
10	Տեղական ինքնակառավարման օր	Նոյեմբեր
16	Հանդուրժողականության միջազգային օր	
17	Ուսանողների միջազգային օր	
20	Երեխաների իրավունքների կոնվենցիայի հռչակման օր / 1989/	
25	Կանանց հանդեպ բռնության վերացման միջազգային օր	
1	ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր	Դեկտեմբեր
3	Հաշմանդամների միջազգային օր	
7	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր	
10	Մարդու իրավունքների օր	
20	Ազգային անվտանգության անվտանգության մարմիններիաշխատողի օր	
26	Նվերների միջազգային օր	
31	Ամանորի տոնական օր մինչև հունվարի 6-ը Ծննդյան տոներ	